Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/10835/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 մարտի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով <<ՍՏ ԱՐՏ>> ՍՊ ընկերության ընդդեմ <<Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության՝ թիվ ՊԴԹ-ՄԱԱՇՁԲ-22/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 05-ին կնքված թիվ ՊԴԹ-ՄԱԱՇՁԲ-22/17 պայմանագիրը միակողմանիորեն լուծելը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

21.03.2023 թվականին հայցվոր <<ՍՏ ԱՐՏ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ս. Ցականյանի կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ <<Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել <<Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության՝ թիվ ՊԴԹ-ՄԱԱՇՁԲ-22/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 05-ին կնքված թիվ ՊԴԹ-ՄԱԱՇՁԲ-22/17 պայմանագիրը միակողմանիորեն լուծելը, ինչպես նաև բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հայցադիմումը Դատարան է մուտքագրվել 2023 թվականի մարտի 21-ին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 2023 թվականի մարտի 22-ին:

Դատարանն, ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

<<ՍՏ ԱՐՏ>> ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ <<Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության՝ թիվ ՊԴԹ-ՄԱԱՇՁԲ-22/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 05-ին կնքված թիվ ՊԴԹ-ՄԱԱՇՁԲ-22/17 պայմանագիրը միակողմանիորեն լուծելը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ.ՋԱԼԱԼՅԱՆ**